

# «Տեղեկատվական ժանրեր» թեմայի ուսուցումը ավագ դպրոցում

*Աշուղաթոյան Տաթևիկ*

*Հանգուցային բառեր. ակնարկ, ռեպորտաժ, թղթակցություն, հարցազրույց, մեղիա սպառող, տեղեկատվություն, լրագրություն, զուգադրության աղյուսակ, նախագծային մեթոդ*

«Գրավոր լրատվական ժանրերի՝ ակնարկի, թղթակցության, ռեպորտաժի, հարցազրույցի ոճական առանձնահատկությունները» թեման ներառված է ավագ դպրոցի 10-րդ դասարանի հայոց լեզվի ծրագրում, և որպես ուսուցման նպատակ առարկայական չափորոշիչը սահմանում է. «Ավելի ընդհանրացված և խոր գիտելիքներ ունենալ լրատվական ժանրերի մասին, կարողանալ այդ ժանրերով գրավոր խոսք ստեղծել»<sup>1</sup> [3, 135]: Բայց քանի որ դասագրքում թեման վերնագրված է «Տեղեկատվական ժանրեր» [1, 41], իսկ վերջին տասնամյակում լրատվամիջոցները մեզ հետ «խոսում են» ոչ միայն տպագիր մամուլից, հեռուստացույցից, ռադիոյից, այլև համակարգիչներից ու բջջային հեռախոսներից, ուստի ստորև կանդրահաշվառանք առհասարակ տեղեկատվական ժանրերի ուսուցման ավագ դպրոցում՝ հաշվի առնելով ՁԼՄ-ների՝ որպես չորրորդ իշխանության դերակատարումը մեր օրերում: Այսօր ավանդական լրատվամիջոցներին ավելացել են նաև առցանց լրատվամիջոցները և սոցիալական ցանցերը, որոնցում շատ ակտիվ թե՛ ստեղծվում, թե՛ սպառվում է տեղեկատվությունը: Այսպիսով կարևորվում են ՁԼՄ-ների հիմնական գործառույթները՝ տեղեկատվական, կրթական, քարոզչական, քննադատական և վերահսկողական, հասարակական կարծիքի ձևավորման, նորարարական և այլն [5]: Այս գործառույթների ազդեցությունը մեծ է հատկապես պատանիների վարքագծի, աշխարհայացքի ու որոշումների վրա: Ուստի անհրաժեշտ է թեմայի ուսուցման խնդիրներն ու նպատակը սահմանելիս կարևորել սա, որպեսզի պատանի մեղիա սպառողը զինված լինի համապատասխան գիտելիքով տեղեկատվական դաշտում ճիշտ կողմնորոշվելու համար, կարողանա լրատվությունը տարբերել քարոզչությունից ու գովազդից, սովորի քննադատաբար մոտենալ մատուցվող տեղեկատվությանը:

Կարծում ենք՝ նպատակահարմար է թեման ուսուցանել երկու փուլով: Նախ՝ աշակերտներն ընդհանրացված և խոր գիտելիքներ ստանան լրատվական ժանրերի, մասնավորապես՝ ակնարկի, թղթակցության, ռեպորտաժի, հարցազրույցի մասին, տարբերեն դրանց ոճական առանձնահատկությունները, ապա՝ որոշակի հմտություններ փոխանցենք, որպեսզի սովորողները ոչ միայն կարողանան գրավոր խոսք ստեղծել այդ ժանրերով, այլև գործնականում պատկերացնեն լրատվա-

---

<sup>1</sup> Լրագրության տեսությունը առհասարակ առանձնացնում է ժանրերի երեք տեսակ՝ տեղեկատվական (լրատվական), որի մեջ ընդգրկվում են հարցազրույցը և ռեպորտաժը, վերլուծական, որի մեջ մտնում է թղթակցությունը, և գեղարվեստական-հրապարակախոսական, որին պատկանում է ակնարկը [4, 213]: Ուստի առաջարկում ենք և՛ դասագրքում, և՛ ծրագրում թեման վերնագրել «Լրագրային ժանրեր»:

միջոցների աշխատանքը: Մեր փորձը կիրառվել է 2017-2018 ուստարում Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Վանաձորի մասնաճյուղի ավագ դպրոցի 10-րդ «ա» դասարանում և ավարտվել է բաց դաս-միջոցառմամբ (2018 թ. մայիսի 5-ին):

Դասընթացի առաջին փուլում աշակերտները սովորում են տարբերել *ակնարկը*, *թղթակցությունը*, *ռեպորտաժն* ու *հարցազրույցը*: Չնայած տարբերություններին՝ սրանք փոխկապակցված են, ուստի արդյունավետ է կիրառել «Զուգադրության աղյուսակ» ռազմավարությունը [2, 82]: Սովորաբար աշակերտների համար որպես ծանոթ հասկացություններ հանդես են գալիս հարցազրույցն ու ռեպորտաժը: Ուստի նպատակահարմար է սկսել դրանցից, ինչը կնպաստի, որ աշակերտները նոր նյութը կարողանան կապակցել ծանոթ հասկացությունների հետ և զուգադրության մեջ վերլուծեն դրանց հարաբերությունները, հասկանան նոր գաղափարի և իրենց ծանոթ երևույթի նմանություններն ու տարբերությունները: Օրինակ՝ նրանք նկատում են, որ այս կամ այն իրադարձությունը ներկայացնելիս լրագրողներն ուղղակի նկարագրում են այն (հրդեհ, տարերային աղետ, ցույցեր, միջոցառումներ և այլն), երբեմն էլ որևէ մեկից հարցազրույց են վերցնում տվյալ դեպքի կապակցությամբ: Աշակերտները բերում են նաև բազմաթիվ հաղորդումների, առցանց լրատվամիջոցներից օրինակներ, որոնք կառուցվում են միայն հարց ու պատասխանի սկզբունքով, ինչպես «Կենտրոն» հեռուստաընկերության «Ուրվագիծ» հաղորդաշարը, 168.am պարբերականի «Հարցազրույց» խորագիրը և այլն: Նրանք նաև նկատում են, որ շատ դեպքերում լրատվական նյութը սոսկ նկարագրություն չէ դեպքի վայրից. լրագրողը նաև մեկնաբանում է, վերլուծում, իր տեսակետն է արտահայտում: Իսկ որոշ գրվածքներում կամ տեսանյութերում, չնայած փաստական նյութին, գերակշռում է գեղարվեստական երանգավորումը, ինչպես «Ավո» ակնարկը [hetq.am](http://hetq.am) պարբերականում [6]: Մտագրոհի միջոցով աշակերտների հետ քննարկվում են այդ չորս գաղափարների ընդհանուր առանձնահատկություններն ու տարբերությունները, ապա դրանք գրանցվում են նմանությունների ու տարբերությունների պունակում՝ սկսելով ընդհանրություններից [2, 82]:

Արդյունքում աշակերտները սովորում են, որ *ռեպորտաժը* տեղեկատվական ժանր է՝ նկարագրողական մեկնաբանություններով և առանց հանգամանալից վերլուծությունների [1, 141]: Ի տարբերություն *ռեպորտաժի*՝ *թղթակցության* հեղինակը կատարվածի մասին արտահայտում է իր կարծիքը, վերլուծում, եզրակացություններ է կատարում [1, 139]: *Ակնարկը* թե՛ հրապարակախոսական, թե՛ գեղարվեստական ժանր է, որն «ընդգրկում է այն դրվագներն ու փաստերը, որոնք առավել տիպական են նկարագրվող հերոսի համար, ավելի կոնկրետ ու տպավորիչ են ներկայացնում նրան» [1, 136]: Իսկ *հարցազրույցը* «մեկ կամ մի քանի անձանց հետ լրագրողի վարած այն զրույցն է, որը վերաբերում է կարևոր, հրատապ, արդիական որևէ թեմայի և կարող է հետաքրքրել հանրությանը» [1, 143]: Այստեղ աշակերտները պետք է իմանան, որ հարցազրույցը կարող է հանդես գալ և՛ որպես առանձին ժանր, և՛ որպես տեղեկատվություն հայթայթելու մեթոդ տեղեկատվական այլ ժանրերի՝ *ռեպորտաժ*, *թղթակցություն*, *ակնարկ* և այլ նյութեր պատրաստելիս:

Նպատակահարմար է օրինակներն ընտրել հեռուստառադիոէթերից, թերթերից, առցանց ՋԼՄ-ներից: Բայց քանի որ մեր խնդիրը նաև գրագետ մեդիա սպառող պատրաստելն է, որը կկարողանա լուրը տարբերել քարոզչությունից, ուստի նյութերն ընտրելիս ցանկալի է առանձնացնել այնպիսիները, որոնք պարունակում են.

- քարոզչություն – տեղեկություն, որ նպատակ ունի որոշակի կարծիք ու դրական կամ բացասական վերաբերմունք ստեղծել որևէ անձի կամ երևույթի նկատմամբ [7],
- միակողմանի տեղեկատվություն – իրադարձություն, խնդրի լուսաբանում միայն կողմերից մեկի ներկայացմամբ կամ մեկնաբանությամբ,
- թաքնված գովազդ – կազմակերպության կամ անձի գովաբանում, որը ներկայացվում է ոչ թե որպես գովազդ, այլ պարզապես լուր, տեղեկատվություն [8]:

«Տեղեկատվական ժանրեր» թեմայի ուսուցման երկրորդ փուլը, որում արդեն աշակերտներն իրենք պետք է հանդես գան որպես տեղեկատվություն ստեղծողներ ու տարածողներ, կարելի է իրականացնել տեխնիկական միջին հագեցվածությամբ ցանկացած դպրոցում, որն ունի համակարգչային սենյակ: Մա նաև սովորողների համար լավ հնարավորություն է՝ ցուցադրելու ինֆորմատիկայից ունեցած գիտելիքները: Քանի որ մեթոդյա աշակերտները հաճախ ավելի իրազեկ են տեխնոլոգիական նորարարություններին, որպես տեսանկարահանող ու ձայնագրող սարքեր՝ կարելի է օգտագործել բջջային հեռախոսները: Որպես ռազմավարություն՝ մենք կիրառել ենք «Խմբային նախագծերը» [2, 151], որովհետև համագործակցային ուսուցման այս ձևն իր հատկանիշներով առավել քան որևէ այլ մեթոդ, համապատասխանում է լրագրության ոլորտի աշխատողներին ներկայացվող պահանջներին: Այսինքն՝ կարևորվում են փոխադարձ վստահության մթնոլորտը, միմյանց օգնելը, ջանք գործադրելը՝ հանուն ընդհանուր նպատակի, անելիքը պլանավորելը, տեղեկությունը վերլուծելը, հետադարձ կապ ապահովելը, արդյունքի համար պատասխանատու լինելը և այլն: Այս ռազմավարությունն արդյունավետ է նաև աշակերտների ինքնակառավարման հմտությունների զարգացման առումով: Ինչպես տեղեկատվական ժանրերն են մարդկանց տարաբնույթ գիտելիքներ տալիս, այնպես էլ խմբային նախագծերը կարևոր են աշակերտներին ընդհանրապես կյանքի մասին գիտելիքներ տալու համագործակցության և իրազեկության տեսակետից [2, 168]: Իսկ ճիշտ հաշվարկված ժամկետները, ինչը շատ կարևոր է լրագրության մեջ, աշակերտներին կանոնավոր աշխատել են սովորեցնում: Բացի այս՝ լրագրողական նյութերում միշտ չէ, որ հավաքած ամբողջ տեղեկություններն անհրաժեշտ է օգտագործել: Ուստի աշակերտները պետք է կարողանան ճշտել, թե արդյոք հավաքած բոլոր տեղեկություններն են արժեքավոր և առնչելի տրված առաջադրանքի հետ: Այսինքն՝ նրանք սովորում են զատել գլխավորը երկրորդականից: Եվ, վերջապես, կարևոր է շարադրանքը. լրագրողական նյութը, անկախ նրանից՝ ռադիոյի, հեռուստատեսության, համացանցի թե տպագիր մամուլի համար է պատրաստվում, նախ պետք է գրավոր շարադրվի: Եվ եթե նույնիսկ օպերատորն ու մոնտաժողն իրենց գործը գերազանց են կատարել, անգրագետ գրված տեքստը կարող է ազդել հանձնարարության վերջնական արդ-

յունքի վրա՝ փչացնելով ամբողջ գործը:

«Խմբային նախագծեր» ռազմավարությամբ մենք ստեղծել ենք «Դպրոցական լուրերի» թողարկում: Նախ դասարանը (մեր դեպքում՝ 20 աշակերտ) բաժանվել է 3-4-հոգանոց խմբերի: Յուրաքանչյուր խումբն ունեցել է լրագրող, օպերատոր, մոնտաժող, խմբագիր: Լրագրողը պատասխանատու է տեղեկություններ հայթայթելու և լրագրողական նյութի կառուցվածքի, օպերատորը՝ նկարահանված կադրերի համար, իսկ մոնտաժողի գործը լրագրողի տեքստը և նկարահանված կադրերը ճիշտ համադրելն է: Խումբն ավելի լավ է աշխատում, եթե աշակերտներն իրենք են ընտրում խմբակիցներին: Քանի որ խմբային հաջող նախագիծը պետք է ապահովի յուրաքանչյուրի մասնակցությունը և թույլ տա, որ խմբի բոլոր անդամները հավասարաչափ պատասխանատվություն ստանան, ուստի գործընկեր ընտրելու հնարավորությունը մեծացնում է նրանց պատասխանատվության զգացումը: Խմբային նախագծերում կարևոր է խմբի առաջնորդի դերը: Տվյալ դեպքում դա խմբագիրն է այնպես, ինչպես ՁԼՄ-ներում է ընդհանրապես: Սակայն ուսուցիչը պետք է ընդգծի, որ խմբագիրը պետք է ապահովի խմբի յուրաքանչյուր անդամի մասնակցությունը, ոչ թե ամբողջ պատասխանատվությունն իր վրա վերցնի:

Թե՛ տեղեկատվական ժանրի տեսակի, թե՛ թեմայի ընտրությունը նույնպես պետք է թողնել աշակերտներին. նրանք լավ գիտեն իրենց հուզող խնդիրները, դպրոցական անցուղարձն ու շրջապատի հերոսներին: Մեր դեպքում «Դպրոցական լուրերի» համար պատրաստվել է վեց տեսանյութ, իսկ «հեռուստատաղավարում» աշխատել են մեկնաբանները:

Այսպիսի գործնական առաջադրանքները հնարավոր չէ հստակ գնահատել: Դա պետք է կատարվի մի քանի անձանց կողմից՝ ըստ հստակ սահմանված չափանիշների [2, 197]: Մեր դեպքում քանի որ բաց դաս-միջոցառմանը մասնակցել են տնօրենությունը, այլ առարկաների ուսուցիչներ և այլ դասարանների աշակերտներ, նրանցից կազմվել է հանձնաժողով, որը խմբերի աշխատանքը գնահատել է՝ ըստ կառուցողական կրթության չափանիշների:

- Խումբը ինչպես է ըմբռնել տրված առաջադրանքին կամ իրավիճակին բնորոշ ընդհանրացումները, գաղափարներն ու փաստերը [2, 198]:
- Ինչպես է մեկնաբանել առաջադրանքի համար հավաքած տեղեկությունները [2, 220]:

Ըստ այսմ՝ հանձնաժողովը *գերազանց* գնահատեց այն խմբերի աշխատանքը, որոնք խորապես ըմբռնել էին տրված առաջադրանքին կամ իրավիճակին բնորոշ ընդհանրացումները, գաղափարներն ու փաստերը, արդեն հայտնի տեղեկատվությանը նորովի մոտեցում էին ցուցաբերել: Ճշգրիտ և հանգամանորեն էին մեկնաբանել առաջադրանքի համար հավաքած տեղեկությունները, ցուցաբերել էին ստեղծագործական մոտեցում, ինչը յուրատիպ համադրվել էր տեղեկատվությանը: *Լավ* գնահատված աշխատանքներում բացակայում էին նորովի մոտեցումն ու ստեղծագործականությունը: Սրանք աչքի էին ընկնում հակիրճությամբ, չնայած խումբը լավ էր ըմբռնել առաջադրանքը, ճշգրիտ մեկնաբանել էր հավաքած տեղեկությունները: Իսկ անհա երկու աշխատանքի դեպքում նկատելի էր որոշ հարցերի թերի լուսաբանում, մեկնաբանությունները շատ հակիրճ էին ու ոչ տպավորիչ, տեսապատկերը նույնպես աղքատիկ էր, տեղեկատվական տեքստի և

պատկերի համադրումն էլ ճշգրիտ չէր: Այս աշխատանքները *բավարար* գնահատվեցին:

Հանձնաժողովը նկատեց, որ որևէ խումբ չի դժվարացել տրված առաջադրանքի համար փաստեր հավաքելու կամ դրանք ըմբռնելու հարցում, և որևէ մեկը հավաքած տեղեկությունները մեկնաբանելիս կոպիտ սխալներ թույլ չի տվել: Բոլորը տեքստերը լեզվական տեսանկյունից գրագետ են եղել: Այսինքն՝ առարկայական չափորոշիչի վերոբերյալ պահանջը՝ «Ավելի ընդհանրացված և խոր գիտելիքներ ունենալ լրատվական ժանրերի մասին, կարողանալ այդ ժանրերով գրավոր խոսք ստեղծել», կատարվել է:

Այսպիսով, «Տեղեկատվական ժանրեր» թեմայի երկփուլ՝ «Զուգադրությունների աղյուսակ» և «Խմբային նախագծեր» ռազմավարություններով ուսուցումը մեծացնում է աշակերտների՝ ավելի ինքնուրույն ու պատասխանատու դառնալու հավանականությունը, ամրապնդում է միջառարկայական կապերը՝ մասնավորապես «Ինֆորմատիկայի» հետ, կրթում է գրագետ մեդիասպառող, նպաստում է մասնագիտական կողմնորոշմանը (լրագրող, օպերատոր, ռեժիսոր, մոնտաժող), սովորեցնում է թիմում աշխատել, որն այսօր աշխատաշուկայում առկա գրեթե բոլոր մասնագիտություններին առաջադրվող պահանջ է: Եվ նույնիսկ եթե հետագայում աշակերտները կարիք չունենան օգտագործելու այս դասընթացի ժամանակ ձեռք բերած հմտությունները, «կհանգեն այն համոզմանը, որ իրենցից յուրաքանչյուրը կարող, ունակ անձնավորություն է» [2, 160]:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Լ. Եզեկյան, Ա. Սարգսյան, Ռ. Սարգսյետոյան**, Հայոց լեզու, դասագիրք ավագ դպրոցի ընդհանուր բնագիտամաթեմատիական հոսքերի 10-րդ դասարանի համար ՄԱՆՄԱԸ, 2014, 207 էջ:
2. Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Ձեռնարկ ուսուցիչների համար, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, Երևան, 2004թ., 336 էջ:
3. ՀՀ կրթության և գիտության նախարարություն, կրթական ծրագրերի կենտրոն, Հայոց լեզու և հայ գրականություն, Հանրակրթական ավագ դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագրեր, Երևան, 2009, 105 էջ:
4. **Ս. Ս. Երիցյան**, Հեռուստատեսային տերմինների և հասկացությունների տեղեկատու բառարան, Էդիթ Պրինտ, Երևան, 2008, 456 էջ:
5. **Панарин Игорь Николаевич**, СМИ, пропаганда и информационные войны, Москва, 2012. <http://www.x-libri.ru/elib/panrn001/00000128.htm> (Հասանելի է 03.10.18):
6. <http://hetq.am/arm/news/20883/avo-hunisi-12-in-zohvec-monte-melqonyany.html> (Հասանելի է 03.10.18):
7. <https://kentron.tv/programs/informational-political/epiketron/16499.html> (Հասանելի է 03.10.18):
8. <https://kentron.tv/programs/informational-political/epiketron/16390.html> (Հասանելի է 03.10.18):

## Изучение темы «Информационные жанры» в старшей школе

*Ашугатоян Татевик*

### Резюме

**Ключевые слова:** очерк, репортаж, корреспонденция, интервью, медиа потребитель, информация, журналистика, таблица сопоставления, проектный метод

Учитывая влияние деятельности СМИ на поведение и мировоззрение подростков, необходимо при определении проблем и цели изучения информационных жанров подчеркнуть отличие информации от пропаганды и рекламы, критический подход к преподнесенной информации.

На первом этапе курса ученики учатся различать очерк, корреспонденцию, репортаж и интервью, применяя стратегию «Таблицы сопоставления».

Согласно примерам, выбранным из СМИ, ученики различают пропаганду, одностороннюю информацию, скрытую рекламу.

На втором этапе обучения темы ученики выступают в качестве создателей и распространителей информации.

Посредством стратегии «Групповые проекты» мы создали выпуск-открытый урок «Школьные вести», который был организован в старшей школе Ванадзорского филиала НПУА.

Подобный тип изучения темы «Информационных жанров» повышает вероятность становления учеников более самостоятельными, укрепляет межпредметные связи, в частности с «Информатикой», воспитывает грамотного медиа потребителя, способствует профориентации, учит работать в коллективе, что на сегодняшний день является требованием, предъявляемым почти ко всем профилям, имеющимся на рынке труда.

И даже если в дальнейшем ученики не будут нуждаться в использовании приобретенных во время учебного курса навыков, придут к выводу, что каждый из них – это умелая, способная личность.

## Teaching the Topic “Information Genres” at High School

*Ashuhatoyan Tatevik*

### Summary

**Key words:** *essay, reportage, correspondence, interview, media consumer, information, journalism, coupling table, design method*

Taking into account the impact of media activities on the behavior and outlook of adolescents, it is important to emphasize the importance of distinguishing media from propaganda and advertising, and critically approaching the provided information, while defining the problems and the aim of teaching information genres.

In the first phase of the course, pupils learn to distinguish essay, correspondence, reportage and interview, using the "Coupling Table" strategy.

In the selected examples from the media, the students distribute propaganda, one-sided information, and hidden ads.

In the second phase of the topic, the pupils come up as information creators and distributors.

Using the "Group Projects" strategy, we have created an open-class "School News" organized at National Polytechnic University of Armenia, at Vanadzor branch.

Similar teaching of the topic "Information Genres" increases the chances of students to become more independent and responsible, strengthens link between subjects, in particular with "Informatics", educates competent media consumers, promotes professional orientation, teaches teamwork, which in the labor market is a requirement for almost all professions. And even if later the students do not need to use the skills gained during this course, they will be convinced that each one of them is a capable person.